Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

ISSN 1829-2224
11255

9/4105/ 20 հունվարի 2012 ուրբաթ

9 771829 222003

## Ա

## Զինդատախազը բարկանո՞ւմ է

Երբ զինդատախազը ասուլիս է տալիս, շատ բնական է, որ նորմալ լրագրողները՝ նրանք, ովքեր արտահայտում են հասարակության շահերը, հարցեր կտան բանակում սպանությունների եւ բռնությունների մասին: Վիճակագրությունը, թե ինչպես է դատախազությունը կատարել եւ գերակատարել իր պլանները, ոչ հասարակությանն է հետաքրքրում, ոչ էլ, համապատասխանաբար, այդ լրագրողներին: Ներկայիս զինդատախազ Գեւորգ Կոստանյանը, որը զարգացած, լեզուներ իմացող մարդ է եւ հաստատ տեսել է, թե ինչպես են արեւմտյան երկրներում ընթանում ասուլիսները, այստեղ՝ Հայաստանում, որոշեց ասուլիսը վարել անձամբ եւ այդպիսով խուսափել անցանկալի հարցերից: Չնայած պարոն Կոստանյանը դա շատ լավ գիտի, բայց ստիպված եմ հիշեցնել, որ ասուլիսները վարում է տվյալ գերատեսչության մամուլի պատասխանատուն՝ մի մարդ, որի պարտականությունների մեջ է մտնում, մասնավորապես, շփվել լրատվամիջոցների հետ եւ դասակարգել բարձրացված հարցերը ըստ հրատապության: Բաց եւ նույնիսկ մեզ նման կիսաբաց հասարակություններում որքան շատ լինեն այդ հարցերի պատասխանները, այնքան հեշտ է տվյալ գերատեսչության աշխատանքը:

Իմ կարծիքով, ցանկացած հարցում հավասարապես սխալ է մի կողմից՝ խնդիրները սքողելը եւ հասարակության աչքերին թոզ փչելը, մյուս կողմից՝ դժբախտությունների հաշվին դիվիդենդներ հավաքելը կամ պարզապես խոսելն ու բողոքելը՝ որեւէ բանական լուծում աչքի առաջ չունենալով: Բանակի հարցում՝ մանավանդ: 98-99 թվականների հետ համեմատած՝ բանակում բռնության դեպքերի քանակը կտրուկ նվազել է՝ դա նույնիսկ Արթուր Սաքունցն է ընդունում: Բայց այդ վիճակագրությունը ո՞ր մի հարազատին կսփոփի, եթե ակնհայտ է, որ իր որդուն սպանել են, ու նույնքան ակնհայտ, որ այդ սպանությունը փորձում են կոծկել: Զինդատախազը հենց այն մարդկանցից է, որոնք դրա համար պետք է պատասխան տան: Ճիշտն ասած, ինձ նույնքան դուր չի գալիս, երբ լրատվամիջոցներն իրենց նյութը հետաքրքիր դարձնելու համար այսօր բանակում ծառայողների հարազատների սիրտ են ճաքեցնում ահասարսուռ պատմություններով եւ նույնքան սարսափազդու կանխատեսումներով:

Ելքը, ինձ թվում է, թափանցիկությունն է: Եթե, օրինակ, «Եղնիկները» մեր «ամենառիսկային» զորամասն է, ապա ի՞նչն է խանգարում այնտեղ պարբերաբար, օրինակ՝ շաբաթը մեկ, ուղարկել որեւէ լրատվամիջոցի ներկայացուցչի: Բնականաբար, այդ լրագրողները պետք է հստակ պատկերացում ունենան ոչ միայն մարդու իրավունքների եւ հումանիտար խնդիրների, այլեւ պետության եւ նրա անվտանգության մասին: Կարծում եմ՝ ԶԼՄ-ների ներկայացուցիչների առկայությունը կզգաստացնի թե զինվորներին, թե սպաներին: Զինված ուժերի բարձր պաշտոնյաներն էլ, այդ թվում՝ զինդատախազը, կհասկանան, որ մենք բանակի թշնամիները չենք: Ճիշտ հակառակը:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Մենք հույսներս դիտորդների վրա չէինք դրել, որ հիասթափվեինք»




Երեկ հրավիրած ասուլիսում ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կարել Հոֆստրան, պատասխանելով մեր հարցին, ասաց, որ գրեթե վստահաբար 2000 միջազգային դիտորդ չի գալու Հայաստան, կլինեն մի քանի հարյուրը, այնքան, որքան նախորդ ընտրություններին:

Քանի որ 2000 դիտորդ հրավիրելու առաջարկը ընդդիմությանն էր, մասնավորապես՝ ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանի առաջարկն էր, aravot.am-ը նրան հարցրեց՝ չե՞ն հիասթափվել, որ սպասված թվով դիտորդներ չեն լինելու: Նրա խոսքերով՝ «Մեզ նման բաները չեն կարող հիասթափեցնել: Մենք հույսներս դիտորդների վրա չէինք դրել, որ հիասթափվեինք, մեր հույսը դնում ենք բացառապես մեր ժողովրդի վրա»: Պարոն Զուրաբյանը գտնում է, որ եթե քիչ դիտորդներ գան, «դա կհակասի Եվրախորհրդի Վեհաժողովի բանաձեւին, որտեղ նրանք կոչ են արել մեծածավալ դիտորդական առաքելություն կազմակերպել: Անեն դեպքում, դա մի գործ է, որ եթե նրանք ցանկանում էին օգնել Հայաստանին եւ այսօր չեն անում՝ մենք դրանից ողբերգություն չենք սարքելու»:

Մեր հարցին՝ ի՞նչ եք կարծում, Եվրամիության տված 1.7 մլն եվրոն իր նպատակին կծառայի՞, պարոն Զուրաբյանն ասաց. «Նախորդ անգամ իրենց գումարը չգիտեմ, բայց առաքելությունը ծառայել է ճիշտ հակառակ նպատակին՝ իշխանությունների ստեղծած ռեժիմի լեգիտիմացմանը: Այս անգամ հույս ունենք, որ նրանք դասեր քաղած կլինեն»:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Կուսակցական հարցերով մենք չենք շփվում»

«Շատ լավ: Ես իրենց տան անդամ եմ»,- aravot.am-ի հարցին՝ այժմ ի՞նչ հարաբերությունների մեջ եք Վազգեն Սարգսյանի ընտանիքի հետ, հաճա՞խ եք այցելում նրանց, ասաց ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Աստվածատուր Պետրոսյանը: Հետաքրքրվեցինք՝ իրեն չի՞ խանգարում այն, որ Վազգեն Սարգսյանի եղբայրը՝ Արամ Սարգսյանը, ներկայումս ընդդիմության դաշտում է, ՀՀ առաջին նախագահի կողքին, իսկ Աստվածատուր Պետրոսյանը՝ գործող իշխանության. «Անեն մեկն իր տեղում է: Ես այնքանով եմ շփվում ընտանիքի հետ, որքանով Վազգեն Սարգսյանի ընտանիքն է: Ես չեմ մտնում որեւէ կուսակցության մեջ: Ես իմ հայացքներն ու իմ դիտակետն ունեմ, ու դրանք ինձ չեն խանգարում ընկեր լինել Արմեն Սարգսյանի հետ, շփվել Զավեն հայրիկի կամ Գրետա մայրիկի հետ: Նրանց հետ մենք այլ շփման եզրեր ունենք. դա մի կյանք է, որը մենք անցել ենք միասին: Կուսակցական հարցերով մենք չենք շփվում»:

Կարդացեք էջ 3:**D**

### ԱՄՆ Պետդեպում սպառնացել են ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբին

«Առավոտի» ունեցած տեղեկություններով՝ Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի ներկայացուցիչները բավական տհաճ զրույց են ունեցել ԱՄՆ-ի ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբի ներկայացուցիչների հետ: Ինչպես հաղորդում է մեր աղբյուրը, ամերիկացիները դաշնակցականներին բաց տեքստով հասկացրել են, որ իրենց համար անընդունելի է ՀՅԴ հայաստանյան կառույցի գործունեությունը: Ամերիկացիները լուրջ կասկածներ ունեն, որ ՀՅԴ-ականների վերնախավի մի մասը ցանկանում է Քոչարյանի՝ հրապարակային քաղաքականության վերադարձ, ինչը նրանց համար դեպքերի անցանկալի ընթացք է: Նրանք սպառնացել են Հայ Դատի հանձնախմբի ներկայացուցիչներին, որ եթե ՀՅԴ-ն շարունակի քոչարյանամետ քաղաքականություն, ապա իրենք այլեւս աչք չեն փակի իրենց հայտնի «շատ փաստերի վրա»:

### Հանրապետականը կպաշտպանի գործող քաղաքապետերին

Երեկ երեկոյան տեղի է ունեցել ՀՀԿ գործադիր մարմնի նիստը, որը վարել է կուսակցության եւ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Որոշվել է, որ փետրվարի 12-ին կայանալիք Հրազդանի եւ Սպիտակի քաղաքապետերի ընտրության ժամանակ Հանրապետականը պաշտպանելու է Հրազդանի գործող քաղաքապետ, Հանրապետական Արամ Դանիելյանի եւ Սպիտակի գործող քաղաքապետ Գագիկ Սահակյանի թեկնածությունները:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 11.30-ին, «Հենարան» ակումբի հյուրն է ազգագրագետ Հրանուշ Խառատյանը:

### Եղանակ

Երեւան - 4 + 1, Շիրակ - 14 - 1, Կոտայք - 12 0, Գեղարքունիք - 14 0, Լոռի - 8 + 2, Տավուշ - 7 + 7, Արագածոտն լեռներ - 12 - 2, Արագածոտն նախալեռն. - 6 + 4, Արարատ - 6 + 4, Արմավիր - 6 + 4, Վայոց Ձոր լեռներ - 12 + 2, Վայոց Ձոր նախալեռն. - 5 + 7, Սյունիքի հովիտներ - 5 + 8, Սյունիքի նախալեռներ - 7 + 2, Արցախ - 3 + 7

## ՄՈՒՏՔԸ՝ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

### Պանթեոն. Մեծ բացակաների ծառուղի

Պետրոս Դուրյանի հիշատակին



Եթե մեզ թվում է, թե Հայոց Մեծերի Պանթեոնը, որն այսօր եւ ընդմիշտ Երեւանում է, եւ ընդամենը մեր անցյալն է եւ ամբողջական է՝ սխալվում ենք: Ինչպես նաեւ սխալվում ենք, երբ մտածում ենք, թե Եռաբլուրում հավերժություն առնող տղաների շիրիմներն են մեր անցյալը...

Ինչպես մեր Մեծերի, այնպես էլ մեր նահատակ տղաների պատկերներն ու գործերը մեր դիմացն են եւ ոչ թե անցյալում: Այսինքն թե՝ մենք պիտի ձգտենք ու հասնենք նրանց իմաստնությանն ու սխրանքին: Նրանցից հազար հինգ հարյուր տարի, յոթ հազար տարի առաջ եւ իրենցից քանինգ հազար տարի առաջ երկիրն այս, որն առաջին ժայռապատկերները ստեղծեց, առաջին վարժեցրած ձիերը ծառայեցրեց իրեն եւ մատուցեց այլ աշխարհներին... ու մնաց մենակ: Հիմա մենք, այս մեծ աշխարհի մեջ, թվում է թե մենակ ենք՝ մնալով ինքներս մեզ հետ: Իսկ մեր տեսակը միակն է, որը կարող է զարդարել աշխարհը:

Եվ ամենասարսափելին, որ ստեղծեց մեր ցեղը՝ գինին ու գարեջուրը՝ խոսքս խաղողի գինու եւ գարու ջրի մասին է, որը Հայոց տարաշխարհիկ կլոր նավերով իջնում էր Եփրատից Բաբելոն, եւ երբ դեռ Բաբելոնը չկար՝ Շումեր: Եվ մի շումեր ազնիվ արքա՝ Անի-Ան-Ակը, թողեց իր սեպագիր հիշատակությունը՝ «իմ երկրում մրգատու ծառեր չկային, եւ ես իմ ենթականերին ուղարկեցի հյուսիսի երկիրը, որտեղից նրանք բերեցին խաղող, ծիրան, շլոր»: Եվ ամենազարմանալին այդ բառերը շումերերենում հնչում են նույն կերպ, ինչպես այսօր՝ հայերենում: Այսինքն թե՝ իրենք էլ են հայ տղերք եւ կարոտել էին իրենց հին երկրին եւ իրենց երկրի միրգն էին ուզում:

Եվ հիմա գիշերվա մեջ մտածում եմ՝ երբ գիտնականն ասում է, թե մեր լեզուն շատ ավելի հին է, ես իրեն հասկանում եմ, եւ միաժամանակ կրկնում եմ, որը, որպես կանոն, առայժմ աշխարհի կողմից մնում է չհասկացված, բայց երբ հանրապետության նախագահն է հրապարակում՝ պիտի, որ այլ ազգերի համար հասկանալի դառնա:

Եվ եթե մենք հին լեզու եւ մշակույթ ունեցող ժողովուրդ ենք, իսկ դա այդպես է, թերեւս մենք պիտի հասկանանք մի շատ կարեւոր բան, որ Հայոց Պանթեոնում Հայոց բոլոր Մեծերի կիսանդրիները պիտի ներկա լինեն՝ անկախ այն բանից, թե որտեղ են նրանց շիրիմները, ինչպես նաեւ Եռաբլուրում պիտի լինեն մեր ցեղի Մեծ զորավարների կիսանդրիները, որպեսզի վաղը հայ երեխան մտնելով՝ տեսնի, թե ինչ Մեծ Ազգի զավակ է ինքը...

Պանթեոնը մեր անցյալը չէ, մեր առջեւում է, որին մենք պետք է ձգտենք եւ հասնենք: Պանթեոնը մեր պատմությունն է եւ մեր վաղվա օրը:

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

# «Երկու կոպեկ էին տալիս, էդ է՞լ են ուզում կտրել»

## Ընտրողների մեծ մասը համամասնականը մեծամասնականից չի տարբերում

Վերջին շրջանում ընդդիմության թեթեւ ձեռքով քննարկումներ սկսվեցին ընտրական համակարգերի թեմայի շուրջ: «Համամասնական, թե մեծամասնական». այս է խնդիրն այսօր ընդդիմության համար, իսկ իշխանության համար, կարծես, նման խնդիր գոյություն չունի, եւ իշխանությունները չեն էլ մտածում որեւէ կերպ արձագանքել եւ խնդիրը քննարկել: Երեկ պարզվեց, որ այսպես վարվելու համար իշխանությունը ունի իր «մեղմացուցիչ դերք հանգամանքը», այն է՝ եվրոպական կառույցների ներկայացուցիչները եւս մտածում են այնպես, ինչպես մեր իշխանությունները՝ ընտրությունների որակի վրա ընտրության տեսակը ոչ մի ազդեցություն չունի: ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կարել Հոֆստրանը երեկ հայտարարել է, որ «թե համամասնական, թե մեծամասնական ընտրակարգերով կարելի է անցկացնել կատարյալ ընտրություններ: Վերջին տարվա ընթացքում «Ընտրական օրենսգիրքը» բարելավվել է, սակայն հենց ընտրություններից առաջ որեւէ լրամշակում կարող է բացասական արդյունք տալ»:

Հարեւանս ընտրական գործընթացներում թրծված, ակտիվ եւ ընտրությունների ժամանակ բավականին արդյունավետ աշխատող է եւ հիմնականում աշխատում է իշխանական ուժերի հետ: Վերջերս ինձ կանգնեցրեց եւ հարցրեց՝ էդ մեծամասնականը ուզում են հանե՞լ, ասացի՝ չեն հանի, մարդը հանգստացավ: Իր բացատրությունը սա է. «Էդ շրջանում է, որ մի քանի կոպեկ ենք աշխատում, մարդիկ դրան են սպասում, հիմա որ հանում են, բա մենք ի՞նչ ենք անելու, մարդիկ ընտրությունների չեն գնա՝ ոչ ընդդիմությանը կընտրեն, ոչ էլ իշխանությանը»: Իրականում ընտրողներին, իրոք, բացարձակապես չի հետաքրքրում, թե ինչ ընտրակարգով են անցնելու ընտրությունները՝ մեծամասնականը լինելու է, թե ոչ: Ընդհակառակը՝ շարքային ընտրողները, նրանք, ում քաղաքական ինքնագիտակցությունը բավականին ցածր է, ընտրությունները համարում են փող աշխատելու միջոց, բավականին դժգոհ են վերջերս տարածվող խոսակցություններից:




Մեր տեսակետը ստուգելու նպատակով երեկ մի փոքրիկ շրջայց կատարեցինք Երեւանի փողոցներում: Մեծամասնական ընտրակարգի դեմ խոսողները քիչ են եւ ոչ այն պատճառով, որ կողմ են այդ կարգին, այլ՝ որ ոչ մի տարբերություն չեն տեսնում: 47-ամյա հաշվապահ Մանվել Սարիբեկյանը ինձ հետ զրույցում ասաց. «Ինձ համար ի՞նչ տարբերություն, ես ոչ մի անգամ կոնկրետ թեկնածուի չեմ ընտրում, ով ուզում է՝ լինի, ես գնում եմ, իմ ուզած կուսակցության անվան դիմաց նշանը դնում եմ եւ հեռանում, անհատ պատգամավորի ես երբեք չեմ ընտրում»:

30 տարեկան գիտաշխատողի համար եւս միեւնույն էր, թե մեծամասնականով ով կընտրվի, ինքը իրենց պատգամավորին չի էլ ճանաչում, բայց իր ուզած կուսակցությանը միշտ ձայն է տալիս: Մատնահարդար Սոնան, իր ասելով, ընտրությունների գնում է միայն մեկ նպատակով. «Գնում եմ, որ մեր սիրված կուսակցություններից մեկին (ինքը անունն ասաց, բայց մենք չենք գրում գովազդից խուսափելու նպատակով) ձայնս տալու համար, մի հատ էլ լավ տղա կա, հայտնի է, պատգամավոր, ձայնս մեկ էլ իրեն եմ տալու, արդեն եկել-ասել են, խոստացել եմ, թե չէ՝ ես ոչ մեծամասնականից եմ բան հասկանում, ոչ ձեր ասած են մյուսից»:

75 տարեկան Արշավիր պապիկն էլ մեր հարցից նեղացավ. «Ոնց թե հանում են, էդ մարդիկ, ինչ ա՞, մարդ չե՞ն, իրանք չե՞ն ուզում ընտրվեն, այ, մեր պատգամավորին ես անձամբ ճանաչում եմ, շատ լավն ա, թող քեզնից լավը չլինի, փողն էլ ա տալիս, վերաբերմունքն էլ. մարդ ես՝ հիվանդանում ես, ինքը հասնում ա: Հիմա որ էդ մարդիկ չլինեն, ես ումի՞ց ինչ ուզեմ»: Իմ դիտարկմանը, թե ախր, պատգամավորից ոչ թե փող կամ դեղ են ուզում, այլ լավ օրենք, Արշավիր պապը բարկացավ. «Տո գնա, է, դու կյանքից ի՞նչ ես հասկանում, օրենքը ինչի՞ս ա, սոված նստեմ, ինչ ա՝ լավ օրենք են գրում, գնա-գնա»:

Եվ այսպես մտածող ընտրողների պակաս մեր հասարակությունը չի զգում: Իրականում այսպես մտածողները, ցավոք, կարծես թե մեծամասնություն են: 2007-ի ընտրությունների ժամանակ (նման դեպք եղել է նաեւ առաջներում) ընտրական տեղամասերից մեկում հետեւում էի ընտրությունների ընթացքին, ընտրողներից մեկին մոտեցա՝ կարճ հարցազրույց վերցնելու: Նա չէր նկատել ձեռքիս ձայնագրիչը եւ մի տեսակ խորամանկ ժպտալով ասաց. «Ի՞նչ կա, ասա, ի՞նչ անեմ»: Ես այդ պահին լավ չպատկերացրի, թե ինչ է ուզում, հետո, երբ երկու մատները իրար քսելով՝ հայտնի շարժումը արեց, ասելով՝ փողից-բանից կա՞, մնացի շվարած: Նաեւ սա է մեր ընտրողը, եւ ավելին սպասելը պարզապես միամտություն կլինի:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

# 2000 միջազգային դիտորդ չի լինելու

Երեկ aravot.am-ը ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիստեայից եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կարել Հոֆստրայից ասուլիսում հետաքրքրվեց, թե նախորդ ընտրություններին հատկացված գումարները ծառայե՞լ են իրենց նպատակին, թե՞ ոչ, ինչին պարոն Հոֆստրան պատասխանեց. «Գոնե ԵԱՀԿ-ի մասով նախկինում ծախսված գումարներն այս տրամաչափերի չեն հասել: Նախկինում ընտրություններում այս գումարի (1.7 մլն եվրո) անգամ 10%-ը չկար: Արդյոք այն չափազանց փո՞քր է եղել, որպեսզի իրապես չկարողանար ազդել ընտրությունների անցկացման ընթացքի վրա: Բոլորս էլ գիտենք, թե ինչպես են անցել ընտրությունները, կարծում եմ՝ բոլորիս շահերից է բխում, որ այս անգամ ընտրությունները շատ ավելի լավը լինեն: Եվ դա հաստատում են բոլորը, ում հետ կարելի է խոսել՝ կառավարությունում, ընդդիմության, միջազգային հանրության շրջանակներում»:

Իսկ ԵՄ ներկայացուցիչը պատասխանեց. «Միայն կարող եմ ասել, որ առաջին անգամ է, որ ԵՄ-ն Հայաստանում նմանատիպ աշխատանքներ է ֆինանսավորում»:

Aravot.am-ը նաեւ հետաքրքրվեց, թե քանի՞ դիտորդ է գալու, եւ ընդդիմության պահանջը՝ 2000 դիտորդ, իրատեսակա՞ն է, թե՞ ոչ: Ըստ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի՝ 2000 միջազգային դիտորդ չի լինելու. «Սակայն չեմ ուզում որեւէ ստվեր գցել ԺՀՄԻԳ-ի (Ժողովրդավարական հաստատությունների մարդու իրավունքների գրասենյակ) նախընտրական գնահատման առաքելության այցի արդյունքների վրա, որը մոտ 12 շաբաթից է այցելելու Հայաստան: Չեմ ուզենա կանխագուշակել այդ առաքելության գնահատականները, բայց կարծում եմ, որ ԺՀՄԻԳ-ը ընտրությունների դիտարկման լիարժեք առաքելություն է այստեղ իրականացնելու»:

Պարոն Հոֆստրան կարծում է, որ միջազգային դիտորդների թիվը մոտ կլինի նախկինում այցելած դիտորդների թվին. «Այսինքն՝ մի քանի հարյուր, որը գուցեեւ բավարար չէ առավոտից-գիշեր յուրաքանչյուր տեղամասում մշտական ներկայություն ապահովելու համար, բայց ավելի քան բավարար է՝ ունենալու պատշաճ ընտրանք եւ տեղեկատվություն՝ ընտրությունների անցկացման ճիշտ գնահատականը տալու համար: Բայց դիտորդական առաքելության ստույգ կազմը կորոշվի 2 շաբաթ անց՝ Հայաստան այցելող ընտրական կարիքները գնահատող առաքելության գործունեության հիման վրա»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

### Ինչո՞ւ է ՀՌԱՀ-ը խուսափում դատարանից

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովն ու «Արմնյուզ» հեռուստաընկերությունը խուսափում են դատարանից: Վարչական վերաքննիչ դատարանում երեկ «Ա1+»-ը ստիպված էր իր ոտնահարված իրավունքները պաշտպանել պատասխանող կողմի բացակայության պայմաններում: ՀՌԱՀ ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել՝ դատավարությունը վարել առանց իրենց: Երեկ դա ընթերցեց դատավորը: «Ա1+»-ի ներկայացուցիչը առարկություն չներկայացրեց:

«Ա1+»-ն իր հայցով դատարանից պահանջում է չեղյալ համարել 2010թ. դեկտեմբերի 16-ի Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի 96Ա որոշումը, որով «Ա1+»-ը թվային հեռարձակման թիվ 11 մրցույթում պարտվող էր ճանաչվել: Հանձնաժողովի որոշմամբ՝ հաղթել է «Արմնյուզ»-ը:

«ՀՌԱՀ նախագահ Գրիգոր Ամալյանը ունի նույն հավասար իրավունքները ՀՌԱՀ մյուս անդամների հետ, չէր կարող միակողմանի եւ առանց ուրիշի հարցում կատարել այլ պետական մարմիններին, հետեւաբար այդ գործողությունները ճիշտ չեն»,- ասաց «Ա1+»-ի փաստաբան Ալեքսանդր Սահակյանը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գրիգոր Ամալյանը «Ա1+»-ի ֆինանսական առաջարկը ուսումնասիրելիս օգտագործել էր, օրինակ, դիվանագիտական լծակները: «Ա1+»-ի շահերի ներկայացուցիչ Ալեքսանդր Սահակյանը թերահավատորեն է մոտենում ՀՌԱՀ-ի գործունեությանը եւ փաստում. «Իր կողմից ներկայացրած վերաքննիչ պատասխանը բացարձակ չէր անդրադառնում մեր կողմից ներկայացրած վերաքննիչ բողոքի փաստարկներին եւ հիմնավորումներին»: Երեկ մեկ ժամ «Ա1+»-ի բողոքը եւ պատասխանողի՝ ՀՌԱՀ-ի բացատրությունները հրապարակելուց հետո դատավոր Արթուր Առաքելյանը հայտարարեց, որ որոշումը կհրապարակվի փետրվարի 9-ին, ժամը 17-ին:

Վերաքննիչ բողոքը «Ա1+»-ը ներկայացրել էր 2011թ. նոյեմբերի 5-ին:

Ըստ «Ա1+»-ի

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 20.01.2012

# Սեյրան Օհանյանը գիտի, թե որ բարձրաստիճան սպաներն են իրենց սպառել

## Պաշտպանության նախկին փոխնախարարը՝ բանակի մասին

Դուք նո՞ւյնպես «օբյեկտիվ իրողություն» եք համարում հայաստանյան բանակում ստեղծված իրավիճակը, երբ խաղաղ պայմաններում բավականին մեծ թվով զոհեր են լինում եւ ամենաարտառոց միջադեպերն են գրանցվում՝ «Առավոտի» հարցին պաշտպանության նախկին փոխնախարար, ներկայումս ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Աստվածատուր Պետրոսյանը պատասխանեց. «Ես հիմա բանակում չեմ, չեմ կարող ասել՝ ինչն է օբյեկտիվ, ինչը՝ սուբյեկտիվ»: Նկատեցինք, որ հիմա «բանակում չլինելը» չի նշանակում ծանոթ չլինել բանակում առկա խնդիրներին, դրանց լուծման մասին սեփական մոտեցումները չունենալ՝ մի մարդու համար, որը ժամանակին եղել է պաշտպանության փոխնախարար: Աստվածատուր Պետրոսյանը նկատեց. «Բանակն այնպիսի նուրբ օրգանիզմ է, որ պետք է սիրել բանակային գործը, զինվորին, դա հասցնել ազգապաշտական, հայրենապաշտական մակարդակի: Եթե խնդիրներ են լինում, եւ այդ խնդրին այսօր լուծում չի տրվում, անպայման կուտակվում է լինում, որն էլ դառնում է հայրերի-որդիների, այսպես ասած, բողոքի նոտա»: Մեր զրուցակիցը եւս գտնում է, որ բանակն ամենօրյա ուշադրության կարիք ունի ոչ միայն հրամանատարական կազմի, այլ նաեւ ժողովրդի կողմից. «Երբեւէ չեն ասի, որ բանակը կառուցեցինք, ու վերջ: Բանակը պետք է կառուցել ամեն օր, եւ եթե բանակում մի պահ կորցրեցինք ազգայինն ու ոգեղենը՝ չնայած գործած հերոսություններին եւ անցած ուղուն, կարող ես թշնամիների շարքին դասվել: Բանակաշինության որոշ փուլերն ավարտվել են, հիմա




հաջորդ փուլերի ժամանակն է: 21-րդ դարի բանակը այլ է: Յուրաքանչյուր զինվոր իր անվան կրողն է, ու յուրաքանչյուր զինվորի մոտ պետք է պատասխանատվություն առաջացնել: Հրամանատարն էլ ոչ միայն հրամանատար, այլ նաեւ հայր պետք է լինի: Ու եթե անհրաժեշտ է, երբեմն հորը կարելի է մի ապտակ էլ թույլատրել: Բանակը պետք է թափանցիկ լինի, բայց բանակն ունի նաեւ իր գաղտնիքները, դրանք չպետք է բացել ու հակառակորդի համար թիրախ դարձնել»:

Ամեն դեպքում, նախկին փոխնախարարը եւս բանակում ստեղծված իրավիճակի վերաբերյալ քննադատական խոսքեր չասաց, այլ փորձեց պարզաբանել, թե ինչու են հասարակության արատներն ավելի ցայտուն արտահայտվում բանակում. «Բանակում հասարակության բոլոր տարրերը կան: Եթե կյանքում գողերը-գողականները առանձին են, մտավորականները՝ առանձին, կան թույլեր եւ ուժեղներ եւ այլն, բանակում նրանք մի տեղում են: Եթե մի դպրոցում աշակերտները չարաճճի են, մեղքը երբեք նրանց վրա չեն գցում, ասում են՝ էս ինչ տնօրենի դպրոցը կամ էսինչ ուսուցչի դասարանը: Բանակում էլ զորամասի հրամանատարի վրա է ամեն ինչ բարդվում: Եթե այդ տարի կա 1600 քրեական հանցագործություն, ոչ ոք հաշվի չի առնում, եթե բանակում կա 300 քրեական հանցագործություն՝ դա հաշվի են առնում: Բանակում զուտ կանոնադրական խնդիր էլ կա՝ բոլորը տղաներ են, եւ նրանց պետք է շահել, պահել, գուրգուրել, նաեւ՝ տղամարդ դարձնել: Էդ բոլորը հնարավոր չէ երկու տարում տալ: Դրա համար էլ այսօր բանակում տիրող իրավիճակի համար միայն բանակի հրամանատարությանը մեղադրելը սխալ է: Այդ հանցագործությունները կատարվում են նաեւ քաղաքացիական կյանքում»:

Նկատեցինք, որ բանակի հրամանատարական կազմում քիչ չեն բարձրաստիճան սպաները, ովքեր իրենց իսկ պահվածքով արդեն բացասական օրինակ են ծառայում, ջիպավոր գեներալները, ովքեր տեր ու տնօրենի, խանի պես են պահում՝ համարելով, որ մնացյալ «հասարակ» մարդիկ իրենց կամակատարները պետք է լինեն: «Եթե եկել է մի աստիճանակարգություն, որտեղ այդ մարդը չի դիմանում... ինքն առաջինը պետք է հասկանա, տղամարդկություն ունենա ու հեռանա: Օրինակ՝ Վազգեն Սարգսյանը շատ հաճախ մասնավոր զրույցներում ասում էր՝ էսինչ մարդը, գեներալը վաղուց իրեն սպառել է: Ձեզ չի՞ թվում, որ արդեն նրա՝ բանակից հեռանալու ժամանակն է: Նույնը այսօր՝ մեր նախարարը գիտի, թե բանակին հրաժեշտ տալու ում ժամանակն է՝ անկախ պաշտոնից ու չինից»: Միաժամանակ, այդ հարցերը կարգի գցելու համար, Աստվածատուր Պետրոսյանի կարծիքով, պաշտպանության նախարարին լծակներ տրված չեն: Եթե նախկինում նախարարն ուղղակի էր ղեկավարում բանակը, հիմա բանակի ողջ զինվորական կազմը ղեկավարում է Գլխավոր շտաբը. «Կառուցվածքային փոփոխությունները, որոնցով եվրոպական ստանդարտների ենք անցել, իրենց հետքը թողել են: Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը անգամ գումարտակի հրամանատարներին, զինվորներին գիտեին եւ ուղիղ զբաղվում էին բոլոր հարցերով: Պաշտպանության նախարարի պաշտոնն այսօր քաղաքական, հայեցողական պաշտոն է դարձել: Եվ նման պաշտոնում նախարարի հնարավորությունները սահմանափակ են: 20 տարին բավարար չէր, որ հայկական բանակը պրոֆեսիոնալների բանակ դարձնեինք: Այս խնդիրն է, որին աստիճանական լուծում պետք է տանք: Այդ ժամանակ այլ հարաբերություններ կլինեն: Օրենքները եւ բարոյական նորմերը խառնվել են իրար: Հարկավոր է մի սինթեզում, եւ դա միայն բանակի գործը չէ: Ի դեպ, այդ գործընթացն արդեն սկսվել է, եւ Սեյրան Օհանյանն իր խոսքում շատ դիպուկ ասաց՝ թողեք, ես կարող եմ դա անել այնքան, ինչքան նախարարին է իրավունք տրված: Ո՞ւմ է իրավունք տրված՝ ԱԺ-ն է, ո՞րն է, թող աշխատեն»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱԿ-ում չե՞ն վճարել քաղբանտարկյալների փաստաբաններին

«Առավոտում» հունվարի 18-ին հրապարակված «Մեկը Սուրեն Սիրունյանն է» հոդվածում արդեն տեղեկացրել ենք, որ 2008թ. «Մարտի 1-ի» գործով դատապարտված ավելի քան մեկ տասնյակ նախկին քաղբանտարկյալների՝ Մի Եվրոպական դատարանից իրենց գանգատը հետ վերցնելու մտադրությունն ավելի խորքային պատճառներ ունի, քան քաղաքականն է, եւ քան կարելի է ենթադրել: Նաեւ խոստացել էինք այդ առնչությամբ հաղորդել հավելյալ մանրամասներ:

Այսպես, մեր տեղեկություններով, ՄԻԵԴ-ից իրենց գանգատները հետ վերցնելու շարժառիթներից եթե ոչ գլխավորը, ապա ոչ պակաս կարեւորն այն է եղել, որ այդպիսի մտադրություն ունեցող նախկին դատապարտյալների գործերով զբաղվող եւ Հայ ազգային կոնգրեսի կողմից վարձված փաստաբաններից ոմանք հայտնվել են ծանր կացության առջեւ: Ըստ aravot.am-ի աղբյուրների՝ նախկին քաղբանտարկյալների գործերով զբաղվող ու նրանց գանգատները ՄԻԵԴ ուղարկելու գործը ստանձնած առանձին փաստաբաններին կատարած աշխատանքի դիմաց Կոնգրեսում հրաժարվել կամ ձգձգում են վճարել: ՀԱԿ իրավական աջակցության հանձնախմբից նրանց կանչել եւ ստորագրել են տվել մի փաստաթղթի տակ, ըստ որի՝ փաստաբաններն իրենց մատուցած ծառայությունների դիմաց իբր ստացել են որոշակի գումար: ՀԱԿ-ում նրանց խոստացել են այդ գումարը վճարել, բայց քանի որ այս խոստումը չի կատարվել, փաստաբաններն էլ չեն վճարել համապատասխան եկամտահարկը պետությանը: ՊԵԿ-ի տարածքային ստորաբաժանման աշխատակիցներն էլ կոնկրետ այդ փաստաբանների հաշվապահական փաստաթղթերի ստուգումից հետո նրանցից հաշիվ են պահանջել: Փաստաբանները ստիպված են եղել դիմել ՀԱԿ-ի համապատասխան հանձնախմբի ղեկավարին: Խոստացվել է հարկայինի պարտքի մասով գումարը փոխանցել, բայց դա էլ չի արվել: Փաստաբանները ստիպված են եղել դիմել իրենց վստահորդ նախկին քաղբանտարկյալներին ու բացատրել, որ իրենք չեն վճարվել ՄԻԵԴ ուղարկված գանգատների ձեւակերպման համար: Դա էլ, ըստ մեր աղբյուրների, այդ գանգատներից հրաժարվելու շարժառիթ է դարձել, որը համեմվում է նաեւ քաղաքական սոուսով:

Մենք փորձեցինք այս տեղեկությունը ճշտել ՀԱԿ-ից: Aravot.am-ի հետ զրույցում ՀԱԿ իրավական աջակցության կենտրոնի ղեկավար Գագիկ Ջհանգիրյանը նախ ասաց, որ սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե Կոնգրեսում «դարդ» են անում այդ գանգատները հետ ստացողների համար: Իսկ մեր կոնկրետ հարցի առնչությամբ հայտարարեց, թե ինքը «որեւէ փաստաբանի գումար վճարելու կամ ինչ-որ թղթեր ստորագրելու որեւէ գործարքից տեղյակ չի»:

Նույն հարցը մենք ուղղեցինք նաեւ նախկին քաղբանտարկյալ Սուրեն Սիրունյանին, քանի որ ՄԻԵԴ ուղարկվող գանգատներից հրաժարվողներից միայն նրա անունն է առայժմ հայտնի: Նա ասաց, թե ինքն էլ է նման տեղեկություններ լսել, բայց քանի որ իր փաստաբան Վարդուհի Էլբակյանը Հայաստանում չի, ինքը չի ունեցել դա ճշտելու հնարավորություն:

Իսկ ահա ՊԵԿ-ում եւ ԴԱՀԿ-ում հաստատեցին մեր տեղեկությունը մասնավորապես առ այն, որ «Մարտի 1»-ի գործով նախկին քաղբանտարկյալներից մի քանիսի պաշտպան Վարդուհի Էլբակյանի՝ Մալաթիա-Սեբաստիա համայնքում գրանցված եւ իրավաբանական խորհրդատվական ծառայություններ մատուցող «Էլբակյան Վարդուհի» ԱՁ (անհատ ձեռներեց) գույքն ու հաշվեհամարներն իսկապես ՊԵԿ-ի հարուցած վարույթի հիման վրա կալանքի տակ են առնված: Ավելին, ՊԵԿ-ի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից փոխանցեցին, որ 09.07.2011 թվականին ՊԵԿ-ը գումարի բռնագանձման պահանջի մասին հայց է ներկայացրել դատարան՝ նշելով, որ «որպես «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետում չվճարված եկամտահարկ, խնդրում ենք անհատ ձեռներեց Վարդուհի Էլբակյանից հօգուտ պետբյուջեի գանձել 581.866 ՀՀ դրամին համարժեք եւ 48.877 ՀՀ դրամ՝ որպես 581.866 դրամի՝ 02.05.2011-18.06.2011թ.-ն ընկած ժամանակահատվածում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հաշվարկված տույժ»:

ՊԵԿ-ը նաեւ միջնորդել էր հայցի ապահովման միջոց կիրառել, այն է՝ արգելանք դնել պատասխանողի՝ սեփականության իրավունքով պատկանող գույքի եւ դրամական միջոցների վրա:

Թե կոնկրետ Վարդուհի Էլբակյանն իրականում ինչո՞ւ չի կատարել իր հարկային պարտավորությունը՝ կիմանանք, թերեւս, նրա՝ Հայաստան վերադառնալուց հետո:

Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### Ըստ զինդատախազի՝ մահվան դեպքերը բանակում նվազել են

ՀՀ զինված ուժերում 2011 թվականի ընթացքում արձանագրվել է մահվան ելքով դեպքերի կտրուկ նվազում: Երեկ ՀՀ Զինվորական դատախազությունում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ Գեւորգ Կոստանյանը: Նրա փոխանցմամբ, 2011 թվականի ընթացքում մահվան ելքով 36 դեպք է գրանցվել՝ 2010 թվականի 54-ի դիմաց:

ՀՀ զինված ուժերում արձանագրված՝ զինվորական ծառայությունն անցնելու հետ կապված մահվան ելքով դեպքերը 2011 թվականին 33%-ով նվազել են: Ըստ Գ. Կոստանյանի, անցած տարի գրանցվել է ծառայություն անցնելու հետ կապված սպանության երկու դեպք՝ 2010 թվականին սպանության 17 դեպքի դիմաց: Այս ցուցանիշը նվազել է շուրջ 80.8%-ով:

«Ցավոք սրտի, ականատես ենք եղել այնպիսի դեպքերի, երբ տարածվել է բացարձակ ապատեղեկատվություն, բայց, ցավոք, հասարակության մեջ լայն արձագանք է ունենում եւ ընկալվում որպես փաստ»,- ասաց նա՝ հավելելով, թե իրենց համար ամեն զինվորի մահ մեծ ցավ է:

Անդրադառնալով մահացած զինվորների ծնողների՝ գործերի նախաքննությունների վերաբերյալ բողոքներին, Գ. Կոստանյանն ասաց, թե չբացահայտված դեպք չունեն. «Մեզ համար շատ դժվար է այդ բողոքներին անդրադառնալ էմոցիոնալ: Մասնագիտական տեսանկյունից պատրաստ ենք քննարկել զանգվածային լրատվամիջոցների հետ: Այդ քննարկումները մասնագիտացված կերպով քննարկել ենք եւ պատրաստ ենք քննարկել: Մարդիկ ավելի շատ սովոր են հասարակական բողոքի դուրս գալ, քան մասնագիտական դաշտում եւ ձեւաչափով հանդիպման գնալ»:

# Մինչեւ նախարարի անունը չեն տվել, «լայաղ» չեն արել սպասարկել

## Հիվանդը 2 ժամից ավելի մնացել է «Արմենիա» բժշկական կենտրոնի ընդունարանում, քանի որ բժիշկները չեն բարեհաճել գոնե առաջին բուժօգնություն ցույց տալ:

Վերջին տարիներին մեր երկրի առողջապահության ոլորտում նկատելի բարեփոխումներ են իրականացվել, եւ եթե բուժոլորտին առնչվող որոշումներն ու օրենքները լիարժեք կիրառության մեջ մտնեն, ապա շարքային քաղաքացին, գոնե առողջության պահպանման հետ կապված հարցերում, խնդիրներ չի ունենա:

Սակայն քանի դեռ ՀՀ-ում ներդրված չէ առողջությունը ապահովագրելու ինստիտուտը, մեր բուժհիմնարկներն առաջնորդվում են «մուծվիր՝ կսպասարկվես» սկզբունքով, անկախ նրանից՝ մարդը շտապօգնությունով է տեղափոխվել հիվանդանոց ու մահամերձ է, թե ոտքի վրա է, բայց անհետաձգելի բուժօգնության կարիք ունի: Օրերս «Արմենիա» բժշկական կենտրոնում (Հանրապետական հիվանդանոց) տեղի ունեցած միջադեպը վկայությունն է այն բանի, որ բարեփոխումներն այս բուժհիմնարկի կողքով են անցել: Այնտեղի բուժանձնակազմը չի փայլում բարեկրթությամբ եւ բժշկին հատուկ բարեհամբույրությամբ: «Առավոտին» դիմած հիվանդի հարազատները վստահեցրին, որ եթե անգամ հիվանդի վիճակը ծայրահեղ է, այնտեղ անգամ առաջին բուժօգնություն ցույց չեն տալիս, մինչ մուծումները չի կատարվում:

Երկու օր առաջ բարձր ճնշումով, ուժեղ գլխապտույտով, սրտի առիթմիայով ու շաքարային դիաբետով 67-ամյա Անահիտ Գեւորգյանին շտապօգնության մեքենայով «Արմենիա» բուժկենտրոն են հասցրել, բայց հիվանդանոցի բուժաշխատողները տեղից չեն շարժվել ու մոտ 2 ժամ ընդունարանում սպասեցնել են տվել՝ իրար վրայից գցելով պատասխանատվությունը. «Այն դեպքում, երբ մայրիկիս վիճակը ծայրահեղ ծանր էր: Ոչ մի բժիշկ մոտ չէր գալիս: Սկզբում նյարդաբանը եկավ, առանց ներկայանալու եւ առանց որեւէ հետազոտության միանգամից ասաց, որ մայրս իր հիվանդը չէ: Եվ ավելացրեց, որ իրենք տեղ չունեն, մի բան էլ «մուննաթ» գալով, որ շտապօգնության աշխատակիցներն իրենց հիվանդանոցի տեղը անգիր են արել ու բոլորին այստեղ են բերում, ու իրենք էլ կրակն են ընկել, որ հերթապահ են մնացել: Այդքանն ասաց ու գնաց: Ընդունարանի աշխատակիցները նույնպես նման արհամարհական տոնով էին վերաբերվում: Եկավ մի սրտաբան եւ նորից առանց հետազոտության ասաց, որ սրտի հետ խնդիր չկա, ու եթե անգամ լիներ, իրենք տեղ չունեն, որ պառկեցնեն հիվանդին: Միայն էնդոկրինոլոգն էր, որ խիղճ ուներ եւ անալիզներ վերցրեց՝ շաքարի եւ արյան մեջ թթվածնի պարունակության վերաբերյալ, ինչպես նաեւ ճնշումը չափեց: Քանի որ ճնշումը բարձր էր, իսկ իրենք դրա համար համապատասխան որեւէ քայլ չէին անում, ես ինքս գնացել եմ եւ մոտակա դեղատնից ճնշման դեղ եմ գնել եւ խմեցրել մայրիկիս: Վերցված անալիզների համար վճարում ենք արել, բայց ընդունարանից մեզ տվեցին միայն շաքարի վերաբերյալ ախտորոշման փաստաթղթերը: Այդքանից հետո էլ ոչ մի անհրաժեշտ բուժօգնություն ցույց չտվեցին: Այստեղ արդեն նյարդերս տեղի տվեցին, եւ ես ասացի, որ այս ամենի մասին տեղյակ եմ պահելու առողջապահության նախարարին՝ Հարություն Քուշկյանին, եւ սկսեցի գոռալ իրենց վրա, որ ոչինչ չեն անում հիվանդի վիճակը կայունացնելու համար: Իմ բողոքից հետո միայն նրանք զանգահարեցին եւ նյարդաբանին հետ կանչեցին, սակայն նա էլի չեկավ: Ասաց, որ մեզնից որեւէ մեկը պետք է բարձրանա իրենց բաժին եւ համապատասխան մուծումներն անի, հետո, երբ իրեն հարմար կլինի, կգա: Ընդունարանի բժիշկն էլ ավելացրեց, որ երբ մուծումն անենք, կարող ենք ընտրել, թե ինչ բաժանմունքում ենք ուզում մեր հիվանդին պառկեցնել: Ես այդտեղ արդեն ափերիցս դուրս եկա եւ ասացի, որ եթե իրենք մասնագետներ են եւ իրենք չգիտեն, թե այդ վիճակում գտնվող հիվանդին որ բաժանմունքում պետք է պառկեցնեն, ես որտեղի՞ց իմանամ, միգուցե գինեկոլոգիայի բաժանմո՞ւնք էլ տանենք»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց հիվանդի դուստրը՝ Մարինե Գեւորգյանը: Ընդունարանում ժամերով նստելուց հետո Մ. Գեւորգյանը կրկին շտապօգնություն է զանգել, որպեսզի մորը այլ հիվանդանոց տեղափոխի, սակայն այդ ծառայությունից հայտնել են, իրենք իրենց գործն արդեն կատարել են, եւ որ կրկին չեն կարող սպասարկել՝ հավելելով, որ եթե հիվանդի վիճակն այդքան ծանր չլիներ՝ կտանեին «Էրեբունի» հիվանդանոց, իսկ «Արմենիա» բուժկենտրոն են տարել, քանի որ հիվանդին առաջին բուժօգնություն ցույց տալու համար այն ամենամոտն ու հարմարն է եղել:



Մ. Գեւորգյանից «Արմենիա» բուժկենտրոնում պահանջել են վճարել 170 հազար դրամ: Նշենք, սակայն, որ պետպատվերի տեղեր ունեցող այս բուժհիմնարկը նույնպես պարտավոր է շտապօգնությամբ տեղափոխված հիվանդին գոնե առաջին բուժօգնությունը ցույց տալ անվճար: Իսկ այդ ծառայության դիմաց գումարները պետությունը վերադարձնում է: Մարինե Գեւորգյանի խոսքերով, իրեն պարզապես ապշեցրել է բուժանձնակազմի անսիրտ, անտարբեր ու մարդու առողջության նկատմամբ այդքան արհամարհական վերաբերմունքը. «Ոնց որ բորոտավոր կամ ոջլոտ լինեինք, ոչ ոք չէր մոտենում: Այդքան բազմաճյուղ հիվանդանոցում այդպես էլ չկարողացան մեզ օգնություն ցուցաբերել»:

Մ. Գեւորգյանը ստիպված է եղել սեփական միջոցներով կրկին տեղահան անել վատառողջ մորը եւ տեղափոխել սրտաբանական հիվանդանոց: «Այնտեղ նրան պառկեցրին եւ օգնություն ցույց տվեցին, չնայած՝ կրկին տեղ չունեին, եւ մայրս իսկապես նրանց հիվանդը չէր: Այդուհանդերձ, այստեղ նրան ոտքի կանգնեցրին»,- ասաց Մ. Գեւորգյանը:

Բողոքի առնչությամբ «Առավոտի» հարցերին ի պատասխան՝ առողջապահության նախարարությունից հայտնեցին, որ նմանատիպ դեպքերը քննարկվում են նախարարությունում. «Կիրավիրվեն երկու կողմերը, եւ քննարկվելուց հետո արդյունքների մասին ձեզ կտեղեկացնենք»,- հայտնեցին նախարարության մամուլի ծառայությունից:

ԱՆՈՒՇ ԽԵՉՈՅԱՆ

## «Ավելի թափով քննադատեք մեզ»



«Մենք երբեւէ չենք ասել, որ ամեն ինչ հրաշալի է, այնքան դժվարություններ ու բացթողումներ կան, որ չեք պատկերացնի: Մենք չենք հասցրել ավելի լավ աշխատել՝ տարբեր պատճառներով: Այնպես որ, մենք ձեզ չենք հարգում ու գնահատում միայն նրա համար, որ դրվատանքի խոսք եք ասում կամ լավ ռեպորտաժներ անելու համար ենք սիրում: Մենք նույն ոգեւորությամբ կսիրենք ու կհարգենք ձեզ, եթե սրտացավ եւ հոգատար վերաբերմունք ցուցաբերեք, աջակցեք՝ քննադատելով, հուշելով, ցույց տալով բոլոր այն թերությունները, որոնք կարելի է շտկել»,- երեկ քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման 10-ամյակի առիթով հրավիրած հանդիպման ժամանակ ասաց խորհրդի նախագահ Մանվել Բադալյանը:

Նրա խոսքերով, խորհուրդն ուրախանում է, երբ որեւէ նախարարի նախընտրած թեկնածուն քաղծառայության մրցույթին հաղթող չի ճանաչվում՝ համապատասխան գիտելիքներ չունենալու պատճառով. «Մեր կյանքն ինչո՞ւ է այսքան անկազմակերպ, ինչո՞ւ է հասարակությունը պետությունից օտարվում, մի չինովնիկի պատճառով, նաեւ իմ, մեկի, մյուսի պատճառով: Եվ մենք տեսնում ենք, որ հատկապես պետական ծառայության ոլորտում կան մարդիկ, որոնք մտահոգ չեն իրենց տեսակով, մտածելակերպով, մասնագիտական եւ մարդկային որակներով եւ բարոյականությամբ: Պիտի այս գործընթացը ձեզ հետ միասին դարձնենք անշրջելի»:

Քաղծառայության խորհրդի ստեղծմանը եւ կայացմանը աջակցելու եւ ավանդ ներդնելու համար Մ. Բադալյանը շնորհակալագրեր հանձնեց գիտաուսումնական 6 հաստատությունների ներկայացուցիչների եւ 9 լրատվամիջոցների՝ Հանրային, «h2», «Երկիր մեդիա», «Կենտրոն» հեռուստաընկերություններին եւ panorama.am-ին, «Արմենպրեսին», «Հանրային ռադիոյին», «Առավոտ» եւ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթերին:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Բնակիչները ջուր կունենան, տարածքն էլ կբարեկարգվի

Հունվարի 19-ին «Երջրմուղկոյուղշին» ՍՊԸ-ն ավարտում էր Արցախի փողոցի 10, 10բ, 10գ, 10դ եւ 10ե շենքերի ներբակային ցանցի վերակառուցումը:

Աշխատանքները, որոնք կատարվում էին «Երեւան Ջուր» ՓԲԸ պատվերով, նպատակ ունեին մոտ 400 գծամետր երկարությամբ 40-50 տարվա վաղեմություն ունեցող, ֆիզիկապես խիստ մաշված 50-150 մմ տրամագծով խողովակները փոխարինել նորերով, բացառել հոսակորուստները եւ այդ միջոցով կայունացնել ու բարելավել ոչ միայն նշված բնակելիների, այլ նաեւ եւս մոտ մեկ տասնյակ հարակից շենքերի ջրամատակարարումը:

Ինչպես տեղեկացրեց շինարարական կազմակերպության գլխավոր ճարտարագետ Վիգեն Հովհաննիսյանը, շուրջ 2 ամիս շարունակվող աշխատանքները կազմակերպվել են այնպես, որ նվազագույնի հասցվեր բնակիչներին պատճառվող անհանգստությունը: Այդ ընթացքում միայն մեկ անգամ է նրանց ջրամատակարարումը ընդհատվել:





Իսկ ներկայիս ջրանջատումը բացատրվում է նոր կառուցված խողովակաշարը գործող 2 բակային պոմպակայաններին միացնելու անհրաժեշտությամբ: Իրականացվող զոդման աշխատանքների ավարտից հետո անմիջապես նախատեսվում է վերականգնել Էրեբունի վարչական շրջանի Արցախի պողոտայի թիվ 10, 10/1, 10Ա, 10Բ, 10Գ, 10Դ, 12, 12Ա եւ Գ. Նժդեհի փողոցի թիվ 58 շենքերի ու հարակից տարածքների ջրամատակարարումը: Ավելին, ենթակապալառու «Ռուբիկ եւ Իշխան» ընկերությունն արդեն սկսել է բակերի ասֆալտապատումը: Ասել է թե՝ եթե եղանակային պայմանները չխանգարեն, առաջիկա օրերին թե տարածքը կբարեկարգվի եւ թե նրա բնակիչները կունենան կայուն ջրամատակարարում:

«Երեւան Ջուր» ՓԲԸ
հաղորդակցության բաժին

## Նախարարը քաղաքացուն առաջարկեց դիմել դատախազություն

«Ծերանոցները սարքել են իրենց սեփականությունը ու մենակ ծանոթներին են այնտեղ տեղավորում»,- երեկ ՀՀ կառավարության շենքի առջեւ տեսնելով կառավարության նիստից դուրս եկող ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանին՝ բողոքեց Արմեն Խալոյանը: Նա «Առավոտի» հետ զրույցում պատմեց, որ արդեն 8 տարի է՝ դիմում է այս նախարարություն՝ հորը ծերանոցում տեղավորելու խնդրանքով: Արմեն Խալոյանի տեղեկություններով, ծերանոցում թոշակառուներից 5000 դրամ են հավաքում, որ լավ սենյակ տան. «Հորս տարել էի ծերանոց, ոջլանոց էին գցել»: Ի պատասխան՝ Ա. Գրիգորյանն ասաց. «Էդ, ինչ որ հայտարարեցիր, գնալու ես դատախազությունում գրավոր դիմում գրես»: «Դատախազությունում գրավոր գրած արդեն կա»,- հակադարձեց Արմեն Խալոյանը:

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

Առավոտ
aravot daily
ՈՒՐԲԱԹ 20.01.2012

# Դատավոր-քաղաքացի վեճը ավարտման փուլում է

## Փաստաբանը համոզված է, որ քննիչը խոչընդոտել է իրականության բացահայտմանը





Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Նարինե Հովակիմյանի նախագահությամբ, մերժել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի Ստեփանավանի նստավայրի դատավոր (այժմ՝ վարչական դատարանի դատավոր) Արման Թովմասյանի ու դատական կարգադրիչների նկատմամբ խուլիգանական վերաբերմունք ցուցաբերելու մեջ մեղադրվող Աշոտ Հարությունյանի փաստաբան Տիգրան Հայրապետյանի 3 միջնորդությունները:

Դատարանում Աշոտ Հարությունյանի պաշտպան, փաստաբան Տիգրան Հայրապետյանը հանդես էր եկել միջնորդություններով իր պաշտպանյալի անմեղության, նրա ազատության ու անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման, ինչպես նաեւ փորձագետի եզրակացությունները՝ որպես անթույլատրելի ապացույցներ հաստատելու հետ կապված:

Փաստաբանը բացատրում է, որ ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Բերբերյանը ողջ նախաքննության ընթացքում ակնհայտ կողմնակալ դիրք է գրավել՝ իր գործողություններով խոչընդոտելով իրականության բացահայտմանը:

Փաստաբանի խոսքերով, քննիչը արդյունավետ միջոցներ չի ձեռնարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի Ստեփանավանի նստավայրի տարածքը նկարահանող տեսախցիկների՝ դեպքի ժամին նկարահանած եւ ֆիքսված էլեկտրոնային կրիչները առգրավելու համար:

«Փոխանակ հենց նույն օրը՝ նոյեմբերի 9-ին որոշում կայացներ ու առգրավեր նկարահանած դեպքն ու ֆիքսված էլեկտրոնային կրիչները, որոշում է կայացրել միայն նոյեմբերի 13-ին՝ այդպես էլ առգրավում չկատարելով»:

Նա ասում է, որ Աշոտին ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել 2010 թվականի նոյեմբերի 9-ին՝ առավոտյան ժամը 9-ի սահմաններում: Խափանման միջոցն ընտրվել է նոյեմբերի 12-ին՝ ժ. 19.50-ի սահմաններում:

«Այդկերպ իմ պաշտպանյալին անազատության մեջ են պահել 82.5 ժամ՝ սահմանվածից 10.5 ժամ ավելի»,- բացատրում է փաստաբան Հայրապետյանը:

Բացի այդ՝ քննիչը Աշոտ Հարությունյանին չի ապահովել հանրային պաշտպանով, ինչի արդյունքում Աշոտը շուրջ 4 օր եղել է առանց պաշտպանի:

«Քննիչի գործողությունների պատճառով ես պաշտպան չեմ ունեցել նաեւ ինձ մեղադրանք առաջադրելու ժամանակ, ինչի կապակցությամբ էլ հրաժարվել եմ ստորագրել մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը՝ նշում կատարելով այդ մասին»,- ասում է Աշոտը՝ ավելացնելով, որ քննիչը ամեն կերպ փորձել է իրենից ցուցմունք կորզել՝ առանց պաշտպանի մասնակցության:

Փաստաբանն ու իր վստահորդը շարունակում են պնդել, որ դատավոր Արման Թովմասյանը դատարանի չորս կարգադրիչների հետ կազմակերպել եւ խմբակային ծեծի է ենթարկել Աշոտ Հարությունյանին, իսկ հաջորդ օրը գործի իրական փաստերը եւ ապացույցները կեղծելու միջոցով սուտ մատնություն կատարել՝ մեղադրելով Հարությունյանին՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ:

Դատարանը, սակայն, վերոնշյալ փաստարկները անհիմն ու չպատճառաբանված համարեց՝ մերժելով միջնորդությունները:

«Փաստորեն, արդարությունը տեղից չի շարժվում, 37 թվի նման՝ մի տարբերությամբ միայն, որ եթե այն ժամանակ արտահայտվողին կորցնում էին, այժմ էլ թույլ են տալիս արտահայտվել, բայց իրենց համրի ու կույրի տեղ են դնում»,- բողոքում է Աշոտի հայրը՝ Սամվել Հարությունյանը եւ ավելացնում, որ որքան էլ ձգտում է իր իրավունքները Սահմանադրությամբ պաշտպանել, այնուամենայնիվ, ոչ ոք հաշվի չի առնում իր բերած փաստերը՝ քողարկելով որդուն ծեծի ենթարկելու հանգամանքները:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

## ՀԱՅԱՑՔ ԵՐԵՎԱՆԻՑ

### Սեւքարում դասադուլը շարունակվում է



Տավուշի մարզի Սեւքար գյուղի դպրոցի 50 աշակերտներ, որոնք հաճախում են սամբոյի պարապմունքներին, արդեն 4-րդ օրն է՝ շարունակում են դասադուլը: Հիշեցնենք, որ լարվածությունը առաջացել է սամբոյի մարզչի՝ Դավիթ Գաբրիելյանի եւ դպրոցի տնօրեն Սամվել Ճաղարյանի միջեւ որոշակի տարաձայնություններից հետո: Այս մասին «Առավոտը» գրել էր եւ երեկ, եւ դրանից առաջ:

Աշակերտների ծնողները հայտնեցին, որ դպրոցի տնօրեն Սամվել Ճաղարյանը մի խումբ ուսուցիչներ է ուղարկել աշակերտների մոտ, որպեսզի երեխաներին համոզեն դադարեցնել դասադուլը: Սակայն ուսուցիչների հորդորները արդյունք չեն տվել:

Ծնողները նաեւ հայտնեցին, որ դպրոցի տնօրենը դասղեկներից պահանջել է հանել սամբոյի խմբակ հաճախող երեխաների դասերին հաճախելու եւ ուսման առաջադիմության ցուցանիշները: Հավանաբար տնօրենը փորձելու է դրանով ապացուցել, որ սամբոյի խմբակ հաճախելը բացասաբար է ազդել աշակերտների ուսման առաջադիմության վրա:

ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

### Հայ կինոռեժիսորը Մոսկվայում նկարահանում է հայկական ֆիլմեր



Վերջերս Մոսկվայի «Ռոլան» կինոթատրոնում ցուցադրված «Ներսես Հովհաննիսյան-խճանկարային դիմանկար» եւ «Վերջին հանդիպումը Յավուրյանի հետ» փաստագրական ֆիլմերի ռեժիսորը Էդուարդ Համբարձումյանն է՝ Խորհրդային Հայաստանի ժողովրդական արտիստ Էդուարդ Համբարձումյանի թոռը:

«Մինչեւ հիմա էլ պատիկիս դիմանկարը դրված է հայկական օպերայի նշանավոր գործիչների պատկերասրահում»,- մեզ հետ զրույցում հպարտությամբ ասաց կինոռեժիսորը: Նա ինքն էլ Երեւանում է սովորել՝ Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետում, Սերգեյ Իսրայելյանի արվեստանոցում, 2006-ին մասնագիտական հմտությունները կատարելագործելու համար եկել է Մոսկվա՝ ՎԳԻԿ: «Իմ կյանքում մեծ եւ զարմանալի դեր խաղացին ՎԳԻԿ-ի դասախոսությունները, վարպետության դասերը, որ անցկացնում էին մեծ ռեժիսորներ, օպերատորներ, դերասաններ, սցենարիստներ՝ Վլադիմիր Նաումով, Կլոդ Լելուշ, Նիկիտա Միխալկով, Էլդար Ռյազանով, Դեվիդ Լինչ, Կարեն Շախնազարով, Տակեշի Կիտանո եւ ուրիշներ: Գիտական ղեկավարս դարձավ կինոգետ, կինոպրոդյուսեր Արմեն Մեդվեդեւը, ում հետ շփումն ինձ շատ բան տվեց»,- խոստովանում է ռեժիսորը:

Էդուարդ Համբարձումյանը մինչեւ 2004թ. ֆիլմերում եղել է մեկ օպերատոր, մեկ՝ ռեժիսոր: Նկարել է հայտնի հայ կինոռեժիսոր եւ օպերատոր Սերգեյ Իսրայելյանի կյանքի եւ ստեղծագործության մասին «Սերիկ» ֆիլմը, նաեւ փաստագրական, դիմանկարային հետեւյալ ֆիլմերը՝ «Երգին ապավինած», «Քսան տարի անց», «Երկուսը քաղաքում», «Բարեւ Վանք», «Անավարտ մենախոսություն», «Իռեն», «Սուբյեկտիվնայա կամերա», «Շարունակությունը հետեւում է», «Դու այն ես, ինչ որ անում ես» եւ այլն: Հարցիս, թե ինչո՞ւ է միայն հայկական ֆիլմեր նկարահանում, պատասխանեց. «Ես նպատակ ունեմ այս ֆիլմերով սփյուռքում գտնվող իմ հասակակից հայրենակիցներին ծանոթացնել մեր կինոարվեստին եւ մշակույթին»:

Ռեժիսորը երազում է նաեւ գեղարվեստական ֆիլմ նկարել՝ կատակերգություն. «Գտնում եմ, որ արդեն պատրաստ եմ դրան, բարդ է, բայց հնարավոր է, մանավանդ որ՝ ունեմ հարուստ փորձ ունեցող, իմաստուն խորհուրդներով ինձ օգնող եւ աջակցող Ներսես Հովհաննիսյանի պես ուսուցիչ: Մնում է ընտրել լավ սցենար»:

Իսկ մինչ այդ նա այսօր աշխատում է Առնո Բաբաջանյանին նվիրված ֆիլմի վրա. «Շուտով Հայաստան եմ վերադառնալու: Այստեղ ամեն ինչ օտար է ինձ: Հապա նայեք այս կադրը, միայն Հայաստանում կարող են մարդիկ անձրեւի տակ էլ փողոցում միմյանց այսպես քաղցր ժպտալ, ուրիշ տեղ այսպիսի բան չկա»:

Իսկ Էդուարդի հաջորդ ֆիլմը Արմեն Ջիգարխանյանի մասին է լինելու:

ԱՄԱԼՅԱ ԻՍԱՅԱՆ
Մոսկվա

# Քննական ցուցակները շուտ կկախվեն՝ զինկոմիսարիատներին չխանգարելու համար

Գնահատման եւ թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) մշակումների եւ կազմակերպական բաժնի պետ Կարո Նասիբյանը «Առավոտի» հետ զրույցում հիշեցրեց, որ փետրվարի 1-ից մեկնարկում է առաջին փուլի միասնական եւ կենտրոնացված քննությունների հայտագրումը, իսկ մարտի 15-ից հետո տվյալների բազավորման եւ ճշգրտման փուլն է: «Ճշգրտման ժամանակ շրջանավարտն իրավունք ունի ընդհանրապես հրաժարվել քննությունից, փոփոխել այն, նոր դիմում-հայտ գրել: Ճշգրտման փուլը տեւում է առնվազն 15 օր, որից հետո մենք պետք է տվյալներ տանք Լոնդոնին՝ տվյալ առարկայի թեստերի տպագրության թվի մասին»,- ասում է բաժնի պետը:

Նաեւ հավելում է, թե միասնական քննություններ կազմակերպող այլ երկրներում մինչեւ հունվար ամիսը աշակերտը պետք է հասցրած լինի կողմնորոշվել՝ ընտրելիք մասնագիտության հարցում, Լեհաստանում նույնիսկ աշակերտի անուն-ազգանունով է քննական թեստը «գալիս»:

Ըստ Կարո Նասիբյանի, այս տարի որոշ փոփոխություններ են մտցվել շրջանավարտի դիմում-հայտի տեքստում. «Իր դպրոցում հայտը լրացնելիս շրջանավարտը միասնական քննությունների հետ մեկտեղ նշում է նաեւ բանավոր քննությունները եւ մուծումը կատարում է բանավորի համար նույնպես, ինչը նախորդ տարիներին անում էր բուհում՝ գործերը հանձնելիս»:

Օրինակ՝ բանասիրական ֆակուլտետներ գնացողները նախկինում հայոց լեզու եւ հայոց պատմություն քննությունները հանձնում էին միասնական կարգով, իսկ երբ մայիսի 5-ից սկսած գործերը համապատասխան բուհ էին հանձնում, այնտեղ վճարում էին 1500-ական դրամ՝ բանավորի համար, հիմա բոլորի համար վճարելու են նույն տեղում:



Պարոն Նասիբյանը տեղեկացրեց մեկ այլ փոփոխության մասին. կառավարության կողմից հաստատված քննությունների ցանկում մյուս օտար լեզուների կողքին «հայտնվել» է նաեւ ռուսաց լեզուն: Այսինքն, եթե նախկինում շրջանավարտը որպես օտար լեզու հանձնում էր անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն եւ այլն, ապա դիցուք տնտեսագիտական ֆակուլտետ ընդունվելու համար արդեն բավարար է հայոց լեզու եւ մաթեմատիկա միասնական քննություն հանձնելը, պյուս ռուսերենը:

ԳԹԿ ներկայացուցչի ասելով, կառույցը ՎՏԲ բանկի բոլոր մասնաճյուղերին նամակ է ուղարկել, որտեղ գրված է, թե շրջանավարտը վճարում կատարելիս չպետք է մանրամասնի՝ կոնկրետ որ քննությունների համար է 15000-կան դրամ վճարում. «Եթե երեխան մուծել է 3000 դրամ, կարող է հանձնել ցանկացած 2 քննություն, 4,500 դրամի դեպքում՝ 3: Քննությունները գրավոր կլինեն, թե բանավոր, բանկային համակարգը պարտավոր չէ դա «իմանալ»:

Պարոն Նասիբյանից հետաքրքրվեցինք՝ իրական հիմք ունե՞ն այն լուրերը, թե քննությունների ժամկետներում փոփոխություններ են գրանցվելու, եւ հնարավո՞ր է քննությունները ծառայեցվեն նախընտրական նպատակներով: Բաժնի պետը պատասխանեց, որ միասնական քննությունների առաջին եւ երկրորդ փուլում ժամանակացույցը չի փոխվում, ԳԹԿ-ի, ԿԳ եւ պաշտպանության նախարարությունների հետ համատեղ քննարկվում է ժամկետների փոփոխությունը՝ միայն բանավոր, կենտրոնացված եւ ներբուհական քննությունների «մասով», ինչը, ԳԹԿ ներկայացուցչի խոսքով, արվում է հօգուտ երեխաների: «Նախկինում, անկախ նրանից, դիմորդը հանձնե՞լ էր քննություն, թե՝ ոչ, եթե 18 տարին լրացել էր, զորակոչում էին բանակ, հիմա չի բացառվում, որ վճարովի ընդունված երեխաները բանակ գնան միայն բուհ ընդունվածների ցուցակը կախելուց հետո, իսկ անվճար ընդունվածները չեն զորակոչվելու»,- հայտնեց Կարո Նասիբյանը:

Եվ այսպես, հունիսի 1-ից մեկնարկելու է քննությունների առաջին փուլը, լրացուցիչը նախկինի պես կայանալու է հուլիսի 2-8-ը: Եթե համատեղ որոշումը կայացվի, հնարավոր է՝ հունիսի 25-ից սկսվեն բանավոր, կենտրոնացված եւ ներբուհական քննությունները եւ տեւեն մինչեւ հուլիսի 8-ը: Եթե նախկինում ցուցակները կախվում էին օգոստոսի 5-ին, այս տարի հնարավոր է՝ դա լինի հուլիսի 15-ին: Պարոն Նասիբյանի ասելով, պրոցեսը ամենեւին էլ կոռուպցիոն ռիսկ չի պարունակում, որովհետեւ գործ ունեն 18000 դիմորդի հետ: Ի դեպ, ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը երեկվա ասուլիսում ասել էր, որ քննությունները ավելի շուտ են ավարտվելու. «Որ չխանգարենք զինկոմիսարիատներին»:

Այս տարի առաջին փուլում քննություն են հանձնելու ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների այս եւ նախորդ տարիների շրջանավարտները, օտարերկրյա քաղաքացիները, ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա ուսումնական հաստատություններում սովորողները: Բանակից զարնանը զորացրվածները կքննվեն լրացուցիչ փուլում, նրանց հետ կլինեն նաեւ ոչ հանրակրթական ուսումնական հաստատությունների, քոլեջների շրջանավարտները: Շրջանավարտները կարող են դիմել բուհեր՝ մայիսի 5-ից մինչեւ հունիսի 1-ը ներառյալ:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Ֆենոմենալ, իսկապես համեմատելի բնօրինակի հետ»

## Տիգրան Մանսուրյանը բարձր է գնահատում Արթուր Շահնազարյանի «Սասունցի Դավիթ» երաժշտական ասքը:




Վերջերս անվանի կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը «Առավոտի» հետ զրույցում, անդրադառնալով մշակութային ժառանգությանը, կանգ առավ «Սասունցի Դավիթ» էպոսի ու արվեստի տարբեր ճյուղերում նրա արտացոլմանը: Հիշատակվեցին Հ. Կոջոյանի, Ե. Քոչարի, Էդ. Իսաբեկյանի նկարաշարերը, դրամատիկական արվեստում՝ Արշավիր Ղազարյանի «Սասնա Միհր» դրաման, կինոյում՝ ռեժիսոր Է. Մարտիրոսյանի «Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ», Ա. Մանարյանի «Սասունցի Դավիթ» ֆիլմերը, երաժշտարվեստում՝ գուսան Շահենի «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը, Էդ. Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը: Տիգրան Մանսուրյանը կոմիտասագետ Արթուր Շահնազարյանի «Սասունցի Դավիթ» երաժշտական ասքն էլ որակեց «Ֆենոմենալ, իսկապես համեմատելի բնօրինակի հետ...»: Այն հանգամանքը, որ մեր օրերում երաժշտարվեստում միայն Շահնազարյանն է անդրադարձել էպոսին, առիթ հանդիսացավ հեղինակի հետ հանդիպման:

Ա. Շահնազարյանը տեղեկացրեց, որ էպոսը երաժշտական գործի վերածելը իրեն հետաքրքրել է դեռեւս ուսանողական տարիներից, իսկ վերջին շրջանում տարվել է դրանով: Երկուսուկես տարի են տեւել 3 ժամ տեւողությամբ 110 համարից բաղկացած (ասերգ, նվագ, պար, երգ) երաժշտական ասքի ձայնագրման աշխատանքները: «Գողթան գուսանները մեր առասպելները ներկայացրել են պարով, երգով, խաղով, փորձել են հարազատ մնալ էպոսի բնօրինակին, միաժամանակ հաղորդելով ժամանակակից շունչ»,- հայտնեց Ա. Շահնազարյանը: Ասաց, որ թեեւ ընդգրկված են պրոֆեսիոնալ երգիչներ, եւ «մեներգիչների հետ աշխատել ենք հնարավորինս հարազատ մնալ հայերենի առոգանությանը ու էպոսի ոգուն, երգեցողությունն էլ մոտեցնել ազգային ձայնի, գույնի ու հայրենի հնչյունների պարզ արտասանությանը»:

Իսկ թե ինչ կազմի նվագախումբ է ձայնագրվել, կոմպոզիտորը նշեց՝ ժողովրդական գործիքների, մանրամասնելով. «Սա պետք չէ ընկալել մեզ ծանոթ ժողգործիքների նվագախումբ: Ընդգրկված են 7 տարբեր պղնձյա փողեր, սրինգներ, մի քանի տեսակի քեմանիներ, սանթուր, քանոն եւ այլ նվագարաններ: Որոշները վերականգնել ենք ըստ միջնադարյան ձեռագրերի եւ պեղումների արդյունքի, օրինակ՝ պղնձյա փողերը, 10-րդ դարի Դվինի ջութակը (սա աշխարհում ամենահին ջութակն է համարվում- Ս. Դ.), հարվածայինները՝ մեծ քեմանի եւ այլն: Անշուշտ, մեծակտավ այս աշխատանքը հնարավոր չէր առանց երգչախմբի մասնակցության եւ «Դար» հիմնադրամի»: Ռեպլիկին, թե այս գործում կոմիտասյան շունչ անպայման կլինի, կոմիտասագետը հաստատելով ասվածը, նշեց, որ օգտվել է ոչ միայն Կոմիտասից, այլեւ Սպիրիդոն Մելիքյանից, Սրբուհի Լիսիցյանից, Արամ Քոչարյանից, Հայրիկ Մուրադյանից եւ այլ աղբյուրներից:

Հարցին՝ ե՞րբ կիրականանա «Սասունցի Դավիթ» երաժշտական ասքի բեմադրությունը, Ա. Շահնազարյանը պատասխանեց. «Էպոսն այսօր նոր սերունդը գրեթե չի կարդում: Հնում էլ չեն կարդացել, բայց ժամանակին այն ներկայացվել է երգերով, պարերով, խաղերով, մի խոսքով՝ ժողովրդի համար ընկալելի է եղել: Ի վերջո, Կոմիտասն ասում էր՝ ժողովուրդը արվեստը ըմբռնում է գործողության մեջ... Ցանկություն ունեմ այն նկարահանել, իհարկե՝ բեմադրության տեսքով եւ տարածել աշխարհով մեկ»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## Նամակ՝ Black Sabbath-ի կիթառահարին

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ նամակ է հղել հռչակավոր ռոք-երաժիշտ, Black Sabbath խմբի կիթառահար Թոնի Այոմիին:

«Մենք մտածում ենք ձեր մասին եւ գիտենք, որ այսօր դուք ավելի ուժեղ եք, քան երբեւէ: Մենք հավատում ենք, որ այն եռանդը, որով դուք աշխատում եք Black Sabbath-ի նոր ձայնասկավառակի վրա՝ ձեզ հավելյալ ուժեր եւ էներգիա կհաղորդի: Ես մեծ ջերմությամբ եմ հիշում Հայաստանում մեր հանդիպումը: Հիացած եմ ձեր աշխատանքով եւ վստահ եմ, որ ունեք ներքին ուժ եւ դժվարությունները հաղթահարելու վճռականություն: Իմ եւ Հայաստանում Ձեր հազարավոր երկրպագուների անունից մաղթում եմ Ձեզ եւ Ձեր ընտանիքին ամենայն բարիք», ասվում է վարչապետի նամակում:

Հունվարի սկզբին հայտարարվել էր, որ Թոնի Այոմիի մոտ հայտնաբերվել է լիմֆոմա վաղ փուլում եւ ներկայումս երաժշտի բուժման պլանն է մշակվում: Չնայած դրան, 2011 թվականի վերջին դասական կազմով վերամիավորված Black Sabbath խումբը շարունակում է աշխատանքները նոր ալբոմի վրա: Ամեն օր Թոնի Այոմին բազմաթիվ աջակցության նամակներ է ստանում աշխարհի տարբեր մասերից: ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը 2009 թվականի հոկտեմբերին Երեւանում Պատվո շքանշան շնորհեց Black Sabbath-ի կիթառահար Թոնի Այոմիին, Deep Purple-ի վոկալիստ Իէն Գիլանին, Asia-ի ստեղնահար Ջեֆ Դաունսին եւ Rock Aid Armenia նախագծի կազմակերպիչ Ջոն Դիին: 1989 թվականին այս եւ այլ ռոք-երաժիշտներ ալբոմ թողարկեցին՝ երկրաշարժից տուժած Հայաստանին օգնելու համար: 2009 թվականի հոկտեմբերին ռոք-աստղերը ժամանել էին Հայաստան՝ «Մեդիամաքսի» եւ ավստրալիական Do Something կազմակերպության կազմակերպած Armenia Grateful 2 Rock/Rock Aid Armenia նախագծի շրջանակներում:

## Եվս մեկ մրցույթ

Facebook-յան «Հայաստանի գիտական լրագրողներ» ակտիվ խմբից բացի, գործում է նաեւ դարձյալ ակտիվ «Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում» նախաձեռնությունը: Վերջինս եւս հայտարարել է գիտական լրագրության մրցույթ: Այն նախատեսված է գիտության հարցերը լուսաբանող այն լրագրողների, հրապարակախոսների ու քաղաքացիների համար, ովքեր հունվարի 1-ից մինչեւ մայիսի 1-ը տարբեր հարթակներում կներկայացնեն հայաստանյան գիտության խնդիրներն ու ձեռքբերումները, վերլուծություններ մեր գիտության վիճակի, գիտության վերաբերյալ հանրության ու պետական կառույցների վերաբերմունքի, հասարակությունում գիտնականի վարկի, Հայաստանում գիտության ֆինանսավորման ուղիների հնարավոր դիվերսիֆիկացիայի, երկրում նորարարական գործունեության հնարավորությունների, սփյուռքի ու արտասահմանյան գիտնականների կարծիքների ու մեկնաբանությունների, ինչպես նաեւ գիտության կազմակերպման այլ խնդիրների վերաբերյալ:

# ՍՊՈՐՏԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Արոնյանը ոչ-ոքի արեց

Հոլանդիայի Վեյկ-ան-Զեե քաղաքում շարունակվում է շախմատի «Tata Steel Chess» գերմրցաշարը:

Երեկ կայացան 5-րդ տուրի հանդիպումները, որոնցում զույգեր կազմել էին Լյուկ Վան Վելին ու Լեւոն Արոնյանը, Մագնուս Կարլսենն ու Անիշ Գիրին, Վուգար Հաշիմովն ու Վասիլի Իվանչուկը, Գատա Կամսկին ու Ֆաբիանո Կարուանան, Սերգեյ Կարյակինն ու Բորիս Գելֆանդը, Հիկարու Նակամուրան ու Դավիդ Նավարան, Թեյմուր Ռաջաբովն ու Վեսելին Տոպալովը: Բոլոր զույգերից առաջինն ավարտվեց հոլանդացի Վելիի եւ Արոնյանի պարտիան: Սեւերով խաղացող Հայաստանի լավագույն շախմատիստն արդեն 31-րդ քայլում համաձայնեց ոչ-ոքիի:

## Վիկ Դարչինյանին ե՞ւս մի շանս է տրվել

Վախթանգ Դարչինյանը երրորդ քաշային կարգում չեմպիոնական գոտի նվաճելու եւս մի հնարավորություն է ստացել: Այս մասին հայտարարել է նրա պրոմոութեր Գերի Շոուն, որի խոսքերով՝ ինքը գործնականում ստացել է ճապոնացի իր գործընկեր Ակիհիտո Հոնդայի համաձայնությունը՝ մարտի վերջին կամ ապրիլի սկզբին թեթեւագույն քաշային կարգում WBC-ի չեմպիոն Շինսուկե Յամանակիի հետ մենամարտ կազմակերպելու համար: Տեղեկացնենք, որ ճապոնացին մարզական կարիերայի ընթացքում դեռ ոչ մի պարտություն չի կրել:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

## Ակումբները նախապատրաստվում են - 2

Շարունակում ենք ներկայացնել հայկական ակումբների նախապատրաստական փուլը: Երեւանի «Բանանցը» հետմրցաշրջանային մարզումները սկսեց դեկտեմբերի 21-ին: Մինչեւ տոները Ռաֆայել Նազարյանի սաները մարզումներ էին անցկացնում վարժասարքերի վրա՝ զուգակցելով դրանք սեփական մարզաբազայի արհեստական խոտածածկով խաղադաշտում կատարած թեթեւ վազքերով: Իսկ արդեն ամանորյա տոներից հետո թիմը վերսկսեց մարզումային գործընթացը հունվարի 8-ին: Առայժմ «Բանանցը» ոչ մի տեղ չի մեկնել եւ մարզումներն անցկացնում է սեփական մարզաբազայում: Առաջին ուսումնամարզական հավաքը նախատեսված է հունվարի 29-ից փետրվարի 9-ը՝ Ավանի ֆուտբոլի ակադեմիայում: Ինչ վերաբերում է արտասահմանյան հավաքներին, ապա, ըստ ծրագրի, «Բանանցը» մինչ մրցաշրջանի մեկնարկը երկու անգամ մեկնելու է Անթալիա՝ փետրվարի 16-ից մարտի 1-ը եւ մարտի 8-17-ը:

Հայտնի են նաեւ այն ֆուտբոլիստների անունները, ովքեր հեռացել են թիմից: Արսեն Բալաբեկյանն արդեն մարզվում է «Ուլիսում», իսկ ազգային հավաքականի կիսապաշտպան Արթուր Եդիգարյանը, որ վարձավճարով էր հանդես գալիս «Բանանցում», այժմ «Փյունիկի» հետ է մարզվում: Երկկողմանի համաձայնությամբ խզվել է Յարեմա Կավացիվի հետ պայմանագիրը: Ժամկետի ավարտից հետո նոր պայմանագիր չի ստորագրվել նաեւ վարձավճարով հանդես եկող Բրունո Կորրեայի հետ: Բետոն էլ հունվարի 12-ին մեկնել է Ուկրաինա՝ Ալեքսանդրիա քաղաքի համանուն թիմում փորձաշրջան անցնելու համար: Այդպիսով, լեգեոներներից միայն Դու Բալան է հանդես գալու «Բանանցի» կազմում. նրա հետ ակումբը գործող պայմանագիր ունի: Թիմի մարզչական շտաբում աշխատանքն է վերսկսել նաեւ դարպասապահների մարզիչ՝ բուլղարացի Նիկոլայ Դոնեւը, որը դեռ 2010 թվականին աշխատել էր «Բանանցում», սակայն այնուհետեւ տեղափոխվել էր Դոնեցկի «Մետալուրգ»: Ակումբի պաշտոնական կայքը տեղեկացնում է, որ թիմում սելեկցիան շարունակվելու է, բայց համալրումը բացառապես տեղի կադրերով կլինի: Այժմ «Բանանցը» մարզումներն անցկացնում է ընդլայնված կազմով:



Հայաստանում է նաեւ նախորդ առաջնությունում Բարձրագույն խումբ վերադարձած ու մրցաշրջանը մրցաշարային աղյուսակի վերջին հորիզոնականում եզրափակած «Արարատը»: Սակայն հայկական ֆուտբոլի երբեմնի լեգենդը, ի տարբերություն «Բանանցի», ըստ ամենայնի չի էլ պատրաստվում մեկնել արտասահմանյան հավաքների: Ամեն ինչ կորոշեն ակումբի սեփականատերերը՝ Հայաստան վերադառնալուց հետո, իսկ այդ «իրադարձությունը» դեռեւս հստակ ժամանակագրված չէ:

Թիմը հետմրցաշրջանային մարզումները սկսել է դեռ դեկտեմբերի սկզբին, սակայն ողջ ծանրաբեռնվածությամբ աշխատանքները մեկնարկել են միայն հունվարի 7-ից: «Արարատը» մարզվում է սեփական մարզաբազայի խաղադաշտերում՝ Ձորաղբյուրում: Մասնակցում են 27-28 ֆուտբոլիստներ, որոնց թվում՝ դուստր թիմի մի շարք խաղացողներ: Նախորդ առաջնությունից հետո, պայմանագրերի ժամկետի ավարտի պատճառով, թիմը լքել են Կարեն Զաքարյանը, Կարեն Ավոյանն ու Արա Հովհաննիսյանը: Իսկ թե ինչ համալրումներ կունենա թիմն ու արդյո՞ք կունենա՝ այժմ ակումբի մարզչական շտաբում դեռ տեղյակ չեն: Ըստ ամենայնի, «Արարատը» կրկին շեշտն ու հույսը կդնի տեղի կադրերի վրա: Չէ՞ որ այս ակումբի ղեկավարները «անիմաստ գործ» են համարում հայկական ֆուտբոլում թիմ պահելը, պահում են «այնքանով՝ որքանով»...

ԳԱՅԱՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

# Ինչը երջանկացնում է հայաստանցիներին, չէր բավարարի արտասահմանցիներին

### Համոզված է հոգեբան Լիլիթ Սարգսյանը

«Եթե երջանկությունը լիներ մարմնական հաճույքների մեջ, ապա մենք պետք է երջանիկ անվանեինք ցուլերին, երբ նրանք խոտ են գտնում ուտելու համար:

Հերակլիտի այս խոսքերն այսօր շատ տեղին են հնչում: 21-րդ դարի մարդն իր երջանկությունը տեսնում է ամբոխների, խաղատների, խնջույքների ու մարմնական հաճույքների մեջ: Ցավոք, շատերն առաջնորդվում են անմարդկային բնազդներով: Այսօր ագրեսիան հաղթում ու հետին պլան է մղում յուրաքանչյուր անկեղծ զգացմունք: Երիտասարդներն առաջվա պես չեն սիրում իրար: Այսօր սիրում են հանուն շահի, փողի, շքեղ ավտոմեքենայի ու հարուստ կյանք ապահովագրելու համար: Երեխաներ ունենում են հաշվարկով, անգամ անուններն են դրվում շահադիտական նպատակներից ելնելով: Շատերն իրենց երիտասարդությունը, ազատությունը, սերն ու երջանկությունը քաղաքականացրել են՝ չգիտակցելով դրա վատ հետեւանքները»,- «Առավոտի» հետ զրույցում ասում է հոգեբան Լիլիթ Սարգսյանը՝ անդրադառնալով երջանի՞կ են այսօր մեր համաքաղաքացիները հարցին:



Մեր զրուցակիցը դրական բան է նկատել, այն է, որ հայերն անգամ աննշանչին բանից կարողանում են իրենց երջանիկ զգալ: Բավարարվածության զգացում հայերը հաճախ են ունենում. «Այն, ինչ երջանկացնում է հայաստանցիներին, հաստատ չէր բավարարի արտասահմանցիներին: Օրինակ՝ սովորական հայկական ընտանիքը իրեն երջանիկ կարող է համարել, եթե պարտքեր չունի, առողջ է ու մի փոքր էլ կարողանում է իրեն շռայլություններ թույլ տալ, խնջույքներ գնալ, գնումներ կատարել: Արտասահմանցիների դեպքում այս տարբերակը հաստատ չի գործում: Հայ կինն իրեն երջանիկ է համարում, երբ ամեն օր դիմավորում է աշխատանքից տուն վերադարձող ամուսնուն, հայ երիտասարդը երջանիկ է, երբ իրեն հաջողվում է շաբաթը մեկ անգամ ընկերների հետ որեւէ տեղ գնալ, ժամանակ անցկացնել եւ այլն: Այսինքն՝ հայերի պատկերացումները երջանկության մասին սահմանափակ են: Թվում է՝ թե լավ է, շատ պահանջկոտ չենք, բայց համեմատվելով շատ այլ ազգերի հետ, կհասկանանք, որ մենք խիստ սահմանափակ ենք»:

Ըստ Լ. Սարգսյանի՝ կյանքը մարդուն միայն մեկ անկրկնելի ակնթարթ է տալիս, իսկ երջանկության գաղտնիքն այն է, որ այդ ակնթարթը կրկնվի ինչքան հնարավոր է ավելի հաճախ, բայց հայերը վերցնում ու սահմանափակվում են հենց այդ մեկ ակնթարթով. «Երջանկությունը երբեք շատ չի լինում, ու այն պահերը, երբ մենք մեզ երջանիկ ենք համարում՝ հնարավորինս պետք է երկարաձգել: Հատկապես երիտասարդները, որոնք իրենց անհոգ կյանքն ու երջանկությունը փոխել են կուսակցությունների երիտթեւերում քաղաքական գործիչներին աջակցելու հետ, նրանք, ովքեր ժպտում են ոչ թե սիրահարվածությունից, այլ հանրահավաքներին մասնակցելու ժամանակ լսած ամպագոռգոռ հայտարարություններից, եւ նաեւ այն երիտասարդները, որոնք քաղաքականացրել են իրենց երջանկությունը՝ պետք է դադարեցնեն երջանկությունն ամբոխների մեջ գտնելը»:

Հոգեբանի ձեւակերպմամբ՝ հաստատ բոլորի համար էլ հաճելի է ամեն օր հայելու մեջ տեսնել երջանիկ մարդու, իսկ քանի որ երջանիկներին ժամանակը չի հերիքում՝ պետք է շտապել:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ

## «Ադրբեջանը պետք է պատասխան տա»

### Ասում են բռնագաղթված հայերը

Այսօր «Նովոստի» միջազգային մամուլի կենտրոնում տեղի ունեցավ «Բաքվի ջարդերն ականատեսների աչքերով: Նոր մանրամասներ» թեմայով ասուլիս: Մասնակիցներն էին Բաքվից փախստականներ Սիրվարդ Գալստյանը, Լիդիա Հարությունովան եւ Արեգա Բալայանը:

Արեգա Բալայանը հիշում է. «1988 թվականի դեկտեմբերի 7-ն էր, ադրբեջանցիները ուրախ էին, որ երկրաշարժ է եղել Հայաստանում: Ընտանիքս վախենում էր տանից դուրս գալ, եկան սպառնացին, մենք վախեցանք, եւ ես հազիվ իմ երեխաներին փրկելով՝ թողեցի ամեն ինչ ու եկա Հայաստան: Այժմ ես փոխիատուցում եմ պահանջում՝ կորցրածիս համար»:

Ղարաբաղ եւ Զանգեզուր բռնագաղթածների եւ զոհված ազատամարտիկների ընտանիքներին աջակցող հասարակական կազմակերպության տնօրեն Սիրվարդ Գալստյանը նշեց. «Լինելով զինվորական ընտանիք, մենք իրավունք չունեինք գնալ Հայաստան: Հեռուստացույցով մեզ հանգստացնում էին, որ ամեն ինչ լավ է, երկիրը խաղաղ է, մենք էլ հավատում էինք, մինչեւ մեր աչքերով չտեսանք ամեն ինչ: Մեզ տանից դուրս արեցին, տարան նավերի մոտ, ընտանիքիս անդամներին ցրեցին տարբեր մասերով, ես ստիպված երեխաներիս մերկ մարմինների վրա գրեցի մեր տան հասցեն, պատիս անունը, որպեսզի չկորցնեմ: Չորս տղաներից մեկը զոհվեց, ամուսինս եւ սկեսուրս՝ նույնպես: Մեծ դժվարությամբ իմ երեք տղաների հետ եկա Հայաստան: Ամեն օր արցունքներս զսպում էի եւ ինձ ուժեղ պահում: Բայց երբ հիշում եմ, փշաքաղվում եմ՝ լաց, գոռոցներ, մոլորված, օգնություն խնդրող երեխաներ եւ կանայք... սարսափելի էր: Ես ամեն ինչ թողել եմ Ադրբեջանում՝ տունս, ունեցվածքս, հողերս, դրանք ես ետ եմ պահանջում: Երջանիկ են այն մարդիկ, ովքեր բարեկամներ եւ հարազատներ ունեն, իսկ մենք կորցրեցինք ամեն ինչ: Ադրբեջանցիները պետք է պատասխան տան, պետք է ետ վերադարձնեն ամեն ինչ: Այս ամենից հետո ոչ մեկը ետ չի վերադառնա Բաքու, մենք Հայաստանը չենք լքի»:

ԱՆԺԵԼԱ ՇԱՀՈՒՄՅԱՆ